Կ-438[11]-10.01.2020-ՊԻ-011 **Երկրորդ ընթերցում**
Լրամշակված նախագիծ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ
«ՓԱՍՏԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»

Հոդված 1. «Փաստաբանության մասին» 2004 թվականի դեկտեմբերի 14-ի ՀՕ-29-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 41-րդ հոդվածի 5-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 17-րդ կետով.

«17) «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքի հիման վրա հարուցված քաղաքացիական գործերով պատասխանողներին:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՏԵՂԵԿԱՆՔ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ
«ՓԱՍՏԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»

Հոդված 1. «Փաստաբանության մասին» 2004 թվականի դեկտեմբերի 14-ի ՀՕ-29-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 41-րդ հոդվածի 5-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 17-րդ կետով.

«17) «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքի հիման վրա հարուցված քաղաքացիական գործերով պատասխանողներին:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (կոդ՝ *Կ-438-10.01.2020-ՊԻ-011/1*, այսուհետ՝ «Նախագիծ») և հարակից օրենքների նախագծերի վերաբերյալ ստացված առաջարկությունների

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություն ներն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	«Լուսավոր Հայաստան» կուսակցություն	«Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետ:	Նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում օգտագործվող «*կրիպտոակտիվներ*» եզրույթի մեկնաբանությունն առաջարկում ենք սահմանել Նախագծում կամ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում, քանի որ այդ եզրույթն առաջին անգամ է սահմանվում ներպետական օրենսդրությամբ:	Ընդունվել է մասամբ: Նման հասկացության սահմանումը դուրս է Նախագծի կարգավորման առարկայից: Սակայն նախագծում կրիպտոակտիվ բառը փոխարինվել է «կրիպտորժույթ» բառով, որի հասկացությունը սահմանված է «Թվային տեխնոլոգիաների զարգացման մասին» ՀՀ օրենքի նախագծով (Պ-253-05.02.2018-ՖՎ-011/0):	Ընդունվել է մասամբ:

2.	«Լուսավոր Հայաստան» կուսակցություն	Նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետ:	Նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված կարգավորմամբ՝ նույնացվում է *ապօրինի ծագում ունեցող գույքն անձի՝ օրինական եկամուտներով չհիմնավորվող գույքի հետ:* Նախագծով օրինական եկամտի մեջ ներառվում են աշխատավարձը, փոխառությունները և այլն: Այսինքն՝ հնարավոր են այնպիսի իրավիճակներ, որ եթե արտագնա աշխատանքի մեկնած անձն (արտագնա աշխատողները սովորաբար գրանցված չեն լինում) իր կատարած աշխատանքի դիմաց կանխիկ եղանակով որոշակի դրամական փոխհատուցում է ստացել, որն օգտագործվել է Հայաստանի Հանրապետությունում բնակվող նրա՝ նախկինում պետական պաշտոնատար անձ հանդիսացած մերձավոր ազգականի համար գույք ձեռք բերելու նպատակով, ապա արտագնա աշխատողի՝ Հայաստանի Հանրապետություն վերադառնալուց հետո Նախագծով սահմանված հանցանքներից մեկը կատարելու մեջ կասկածվելու դեպքում վերջինս զրկված կլինի գույքի օրինականությունը հիմնավորելու հնարավորությունից: Այլ խոսքով՝ ձեռք բերված շարժական/անշարժ գույքը, որի ձեռքբերման համար անհրաժեշտ եկամուտների օրինականությունն	Չի ընդունվել: Հաշվի առնելով միջազգային փորձը նախագիծն ամբողջությամբ կազմված է այն տրամաբանությամբ, որ եթե անձի տիրապետման ներքո գտնվող ակտիվները էականորեն գերազանցում են նրա օրինական եկամուտները, հետևաբար գործում է գույքի՝ անօրինական եղանակով ձեռքբերման կանխավարկածը, որն իր ամրագրումն է ստացել նաև Նախագծի 20-րդ հոդվածի 2-րդ մասում, ինչ վերաբերում է օտարերկրյա փոխանցումների նվազման հետ կապված մտավախությանը, ապա հարկ է նկատել, որ դրանց օրինականությունը գործնականում	Չի ընդունվել:

			անհնար է ապացուցել այդպիսի ապացույցների բացակայության պատճառով, Նախագծի տրամաբանությամբ համարվում է ապօրինի, ինչն անթույլատրելի է: Այսինքն, մի կողմից սա վնասում է տնտեսությանը, քանի որ օրինակ տրանսֆերտային միջոցներն այստեղ այլևս չեն ծախսվի, մյուս կողմից ստացվում է, որ անձը պետք է հիմնավորի իր գույքի ծագման օրինականությունը, այլ ոչ թե հակառակը (մեղավորության կանխավարկած), ինչը չի բխում Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (այսուհետ՝ «Սահմանադրություն») 66-րդ հոդվածի պահանջներից: Ավելին, Նախագիծը եկամուտների տեսակների մեջ նախատեսում է նաև գյուղատնտեսական արտադրանքից ստացվողը (3-րդ հոդվածի 1-ին մասի (ժը) կետ): Խնդիրն այն է, որ գյուղական արտադրանքի իրացումն առավելապես չի փաստաթղթավորվում, որպիսի պայմաններում այդ արտադրանքի իրացումից ստացված եկամտի օրինականությունն ապացուցելու անհամաչափ պարտականություն դրվում է գյուղատնտեսական արտադրանքից եկամուտներ ստացող անձանց վրա: Հաշվի առնելով շարադրվածը՝	ապացուցելը բավականին հեշտ է՝ ներկայացնելով օրինակ բանկային փոխանցումները հավաստող անդորրագրերը:	

			առաջարկում ենք սահմանել այնպիսի կարգավորումներ, որոնք անհամաչափ ապացուցողական բեռ չեն նախատեսի քաղաքացիների համար, ինչպես նաև զերծ մնալ այն տրամաբանությունից, որ օրինական եկամուտներով չհիմնավորվող ցանկացած գույք համարվում է ապօրինի:		
3.	«Լուսավոր Հայաստան» կուսակցություն	Նախագծի 3-րդ հոդվածի 4-րդ մաս:	Նախագծի 3-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է ուսումնասիրության հնարավոր հիմք հանդիսացող հանցագործությունների ցանկը: Զարմանալի է նման ուռճացված ցանկի առկայությունը, քանի որ նախատեսված են այնպիսի հանցանքներ, (օրինակ՝ ընտրողներին կաշառք տալը, արհեստավարժ մարզամրցումների և հանդիսադիր առևտրային մրցույթների մասնակիցներին ու կազմակերպիչներին կաշառելը և այլն) որոնք սոսկ վերացական եզրեր ունեն այն հանցանքների հետ, որոնց պարագայում է միջազգային պրակտիկայում թույլատրելի և հիմնավորված համարվում գույքի բռնագանձման այս արտակարգ մեթոդի կիրառումը: Բանն այն է, որ միջազգային փաստաթղթերը գույքի բռնագանձման քաղաքացիաիրավական ինստիտուտի կիրառությունն օրինաչափ են համարում այնպիսի հանցանքների	Ընդունվել է մասամբ: Նախագծում կատարվել են որոշ փոփոխություններ, ավելացվել են ՀՀ Քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 2-րդ մասով (Ապօրինի կերպով զենք, ռազմամթերք, պայթուցիկ նյութեր կամ պայթուցիկ սարքեր ձեռք բերելը, իրացնելը, պահելը, փոխադրելը կամ կրելը) և նախագծով առաջարկվող 338.2.-րդ հոդվածով նախատեսված հանցակազմերը: Նախագծից հանվել է 200-րդ հոդվածով	Ընդունվել է մասամբ:

			համար, ինչպիսիք են փողերի լվացումը, ահաբեկչության ֆինանսավորումը, թմրանյութերի ապօրինի շրջանառությունը և թրաֆիքինգը: Այսինքն՝ ընտրված է հանցագործությունների այպիսի շրջանակ, որոնք հանրային խիստ բարձր վտանգավորություն ունեն, և դրանց դեմ միայն քրեաիրավական միջոցներով պայքարն անարդյունավետ է: Չնայած բավականին ընդարձակ ցանկին՝ մեր կարծիքով դրանից դուրս են մնացել այնպիսի հանցատեսակներ (*ապօրինի ձեռնարկատիրություն, կեղծ ձեռնարկատիրություն*), որոնք ոչ պակաս կոռուպցիոն բնույթ ունեն, և կոռուպցիայի դեմ պայքարի շրջանակներում նման հանցակազմերիբացառումն առնվազն անտրամաբանական է թվում: Ուստի առաջարկում ենք կրճատել սահմանված հանցագործությունների ցանկը՝ միաժամանակ ավելացնելով այստեղ նշված հանցատեսակները:	նախատեսված հանցակազմը (առևտրային կաշառքը), 214-րդ հոդվածով նախատեսված հանցակազմը (Առևտրային կամ այլ կազմակերպությունների ծառայողների կողմից լիազորությունները չարաշահելը):	
4.	«Լուսավոր Հայաստան» կուսակցություն	Նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետ:	Նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետը սահմանում է «*փոխկապակցված անձ*» հասկացությունը: Նշված հասկացության մեջ մտնում են նաև այն անձինք, ովքեր *անհատույց կամ շուկայական գնից էականորեն ցածր գնով գույք են ստացել:* Ստացվում է, որ	Չի ընդունվել: Ուսումնասիրվող սուբյեկտից անհատույց կամ էականորեն ցածր գնով գույք ձեռքբերելը ուսումնասիրվողի և	Չի ընդունվել:

			եթե անձինք հարկերից խուսափելու համար իրականից ավելի ցածր գին են նշել կամ կատարել են գործարք, սակայն այն ձևակերպել են որպես նվիրատվություն, ինչը Հայաստանի Հանրապետությունում բավականին տարածված է, ապա ըստ Նախագծի տրամաբանության՝ գույք ձեռք բերողները կարող են զրկվել գույքից՝ հօգուտ պետության, այնինչ նման գործարքների նկատմամբ պարզապես կիրառելի են անվավերության հետևանքները՝ սահմանված քաղաքացիական օրենսդրությամբ: Ընդ որում՝ խիստ վիճելի է նաև փոխկապակցված համարելը ցանկացած իրավաբանական կամ ֆիզիկական անձին, ում տվյալ անձը փաստացի անհատույց կամ շուկայականից էականորեն ցածր գնով փոխանցել է գույք: Ավելին, սա տալիս է նաև հայեցողական կիրառության հնարավորություն՝ ստեղծելով իրավական կոլիզիա (կիրառել քաղաքացիական օրենսդրությամբ սահմանված գործարքների անվավերության նորմե՞րը, թե՞ քննարկման առարկա դրույթները): Ընդ որում, անձն իրավասու է վաճառել իր գույքն իր ցանկացած գնով և ելնելով օբյեկտիվ (օրինակ՝ ֆինանսական	ձեռքբերողի ինքնուրույն փոխկապակցվածության հանգամանք է դիտվել այն տրամաբանությամբ, որ գործնականում հազվագյուտ է, որ անձիք իրենց հետ անձնական փոխկապակցվածություն չունեցող անձանց անհատույց կամ շուկայականից 80 տոկոս ցածր գնով հանձնեն գույք: Ինչ վերաբերում է «մերձավոր ազգականներ» հասկացության շրջանակին, ապա անձանց այսպիսի շրջանակի նախատեսումը պայմանավորված է գործնականում հանդիպող խնդիրներով:	

			ճգնաժամ) և սուբյեկտիվ (առողջական խնդիրներ և այլն) հանգամանքներից՝ նա կարող է դա վաճառել շատ ցածր գնով: Ըստ այդմ՝ այստեղ ևս պետք է նախատեսել, որ հակառակ կողմը պետք է ապացուցի վաճառողի ոչ իրավաչափ նպատակներն ու գործողությունները: Խիստ լայն է նախատեսված նաև «*մերձավոր ազգականներ*» հասկացության շրջանակը: Կարծում ենք, որ նման շրջանակ նախատեսելիս խախտվել է հանրային և մասնավոր շահերի արդարացի հավասարակշռման գաղափարը, և հորեղբոր, մորեղբոր, հորաքրոջ կամ մորաքրոջ ընտանիքի անդամների ընդգրկումը մերձավոր ազգականների թվում արդարացված չենք համարում: Ուստի առաջարկում ենք իրավական այլ կարգավորումներ կիրառելու հնարավորության առկայության դեպքում նախապատվությունը չտալ Նախագծին, ինչպես նաև կրճատել մերձավոր ազգականներ հասկացության շրջանակը:		
5.	«Լուսավոր Հայաստան» կուսակցություն	Նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասի 25-րդ կետ:	Նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետը որպես իրավասու մարմին նախատեսում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության պատասխանատու	Չի ընդունվել: Նախագծի կարգավորման շրջանակներում գույքի բռնագանձումը ինքնին	Չի ընդունվել:

			ստորաբաժանումը: Կարծում ենք, որ նշված նորմը խնդրահարույց է Սահմանադրությանը համապատասխանության տեսանկյունից. ըստ Սահմանադրության 176-րդ հոդվածի 3-րդ մասի՝ դատախազությունը միայն բացառիկ դեպքերում է օժտված պետական շահերի պաշտպանության հայց ներկայացնելու իրավասությամբ: «*Բացառիկ*» բառն Էդուարդ Աղայանի «Արդի հայերենի բացատրական բառարան»-ում սահմանվում է որպես *բացառություն կազմող, կանոնից բացառվող, հազվագյուտ, արտակարգ:* Սակայն Նախագծում սահմանվել է ապօրինի գույքի բռնագանձման հայցի համար հիմք հանդիսացող հանցագործությունների բավական ընդգրկուն ցանկ, և ստացվում է, որ դատախազությունն իր բացառիկ լիազորությունն իրացնում է ամենևին էլ ոչ բացառիկ դեպքերում: Մյուս կողմից դատախազության սահմանադրական այդ լիազորությունն ուղղված է պետությանը հասցված վնասը, ոչ թե երրորդ անձանց խախտված իրավունքները վերականգնելուն: Որոշ դեպքերում (օրինակ՝ առանձնակի արժեք ունեցող առարկաներ հափշտակելը, որը կատարվել է ավազակությամբ կամ	գույքի բռնագանձման բացառիկ ընթացակարգ է, շեղում՝ գույքի բռնագանձման ընդհանուր կանոններից, հետևաբար այդ իմաստով չի կարող հակասություն առաջացնել Սահմանադրության 176-րդ հոդվածի 3-րդ մասի հետ, ավելին Սահմանադրության նշված դրույթից հետևում է, որ պետության շահերի հայց հարուցելու բացառիկ դեպքերը հենց օրենքներով սահմանված դեպքերն են, հետևաբար Նախագծով դատախազությանը նման լիազորությամբ օժտելը լիովին իրավաչափ է:	

			շորթմամբ կամ կազմակերպված խմբի կողմից), խախտվում են երրորդ անձանց շահերը: Նման պայմաններում առնվազն անհասկանալի է, թե ինչու է դատախազությունը հարուցում պետական շահերի պաշտպանության հայց, եթե պետությունը գույքային վնասներ չի կրել: Գլխավոր դատախազության համապատասխան ստորաբաժանմանը որպես իրավասու մարմին նախատեսելը, ըստ այդմ, խախտում է նաև Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին մասի պահանջն առ այն, որ *պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով:* Ուստի առաջարկում ենք Նախագծին օրինական ուժ տալը հետաձգել մինչև Սահմանադրության մեջ համապատասխան փոփոխություններ և լրացումներ կատարելը:		
6.	«Լուսավոր Հայաստան» կուսակցություն	Նախագծի 5-րդ հոդված:	Նախագծի 5-րդ հոդվածը, որը սահմանում է ուսումնասիրությունն սկսելու հիմքերը, որևէ նշում չի պարունակում քրեական վարույթին նախապատվություն տալու մասին: Այնինչ, ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ 2003թ.	Չի ընդունվել: Նախագծի 5-րդ հոդվածում ամրագրված հիմքերը հանդիսանում են ազդակներ, որոնց հիման	Չի ընդունվել:

			հոկտեմբերի 31-ի կոնվենցիայի 54-րդ հոդվածի 1-ին մասի (գ) կետը սահմանում է, որ *յուրաքանչյուր մասնակից պետություն պետք է քննարկի այնպիսի միջոցներ ձեռնարկելու մասին հարցը, որոնք կարող են անհրաժեշտ լինել, որ այդպիսի գույքի բռնագրավման համար հնարավորություն ստեղծվի՝ առանց այնպիսի գործերով քրեական վարույթի շրջանակներում դատավճիռ կայացնելու, երբ հանցագործը չի կարող հետապնդվել մահվան, թաքնվելու կամ բացակայելու պատճառով կամ այլ համապատասխան դեպքերում:* Մեջբերված դրույթից բխում է, որ առանց մեղադրական դատավճռի գույքի բռնագանձումը հնարավոր է կիրառել միայն այնպիսի իրադրություններում, երբ հնարավոր չէ հետապնդումն իրականացնել քրեական վարույթի շրջանակներում, և քրեադատավարական երաշխիքների պահպանմամբ ապացուցել անձի մեղավորությունը՝ դրանից բխող հետևանքներով: Սակայն Նախագծով որդեգրվել է միանգամայն այլ տրամաբանություն, և առանց մեղադրական դատավճռի գույքի բռնագանձման վարույթն առաջնային է: Ուստի առաջարկում ենք նույն հոդվածում նախատեսել դրույթ, ըստ որի՝ առանց մեղադրական դատավճռի գույքի	վրա կարող է սկսվել ուսումնասիրությունը: Դրանց էությունը կայանում է նրանում, որ ապօրինի ծագում ունեցող գույքի առկայության և որոշակի հանցագործությունների կատարման առնչությամբ հիմնավոր կասկածները (որոնք, այդ թվում, արտահայտվում են անձին որպես մեղադրյալ ներգրավելով) բավարար են, որպեսզի պետությունն ուսումնասիրի հայց հարուցելու հիմքերի առկայությունը՝ նախնական փուլում առանց որևէ միջամտության անձի սեփականության իրավունքի նկատմամբ: Ընդ որում, ապօրինի ծագում ունեցող գույքի առկայության ռիսկի մասին ազդակ լինելուց	

			բռնագանձումը պետք է դիտարկվի որպես բացառիկ միջոց այն դեպքերի համար, երբ քրեական հետապնդումնանհնարին կամ դժվար է, օրինակ՝ *անձը մահացել է, անձը փախուստի է դիմել՝ իր գույքն այլ անձանց անուններով ձևակերպելով կամ վաճառելով, անցել են քրեական պատասխանատվության վաղեմության ժամկետները, անձը գտնվում է այլ պետության տարածքում և անձի գտնվելու վայրի պետությունը հրաժարվում է անձին հանձնելուց:*	զատ, քրեական գործի ընթացքը և ելքը պայմանավորված չեն կարող լինել բռնագանձման վարույթի ելքով և հակառակը:	
7.	«Լուսավոր Հայաստան» կուսակցություն	Նախագծի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետ:	Նախագծի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը սահմանում է *«առկա են բավարար հիմքեր»* գնահատողական կատեգորիան: Խնդիրն այն է, որ սահմանվել է հնարավոր չարաշահումների տեղիք տվող բավականին լայն հասկացություն: Առաջարկում ենք որոշակիացնել այս խիստ անորոշ եզրույթը:	Չի ընդունվել: «Բավարար հիմքեր» բառակապակցությունը մի շարք դեպքերում օգտագործվում է նաև ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքով՝ մասնավորապես՝ անձին բերման ենթարկելիս (57-րդ հոդվածի 2-րդ մասի 9-րդ կետ), կալանքը որպես խափանման միջոց ընտրելիս (135-րդ հոդվածի 2-րդ մաս),	Չի ընդունվել:

				որտեղ ապացուցողական շեմը շատ ավելի բարձր է: Այդ առնչությամբ կարևոր է շեշտել, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը գտել է, որ թեև օրենքում որոշակիությունը մեծապես ցանկալի է, դա կարող է հանգեցնել չափազանց կոշտության, և օրենքը պետք է կարողանա հարմարվել փոփոխվող հանգամանքներին: Հետևաբար, շատ օրենքներ անխուսափելիորեն ձևակերպվում են այնպիսի հասկացություններով, որոնք քիչ թե շատ անորոշ են և որոնց մեկնաբանությունը և կիրառումը պրակտիկայի խնդիր է («Busuioc v. Moldova», applicationno.	

				61513/00, 21/12/2004):	
8.	«Լուսավոր Հայաստան» կուսակցություն	Նախագծի 9-րդ հոդված:	Նախագծի 9-րդ հոդվածը սահմանում է ուսումնասիրության գաղտնիությունը: Որպես համեմատություն նշենք, որ գաղտնի է քրեական գործերով մինչդատական վարույթը, սակայն դրա նկատմամբ, որպես գործընթացի օրինականության պահպանման անհրաժեշտ երաշխիքներ, գործում են դատախազական հսկողությունը և դատական վերահսկողությունը: Այս առումով խնդրահարույց է, որ մինչև 3 տարի տևող ուսումնասիրությունն ընթանում է գաղտնի և չի վերահսկվում, ինչը կարող է չարաշահումների տալ: Նախագծով նախատեսվում է, որ իրավասու մարմինն ուսումնասիրության ընթացքում իրավունք ունի ստանալու բանկային և այլ գաղտնիք հանդիսացող տեղեկություններ: Այստեղ հարկ է նշել, որ մեղադրյալը մինչդատական վարույթի ավարտին իրավունք ունի ծանոթանալու բոլոր նյութերին և բողոքարկելու բանկային գաղտնիք տրամադրելը թույլատրող դատարանի որոշումը (Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 278-րդ հոդված): Այնինչ առանց մեղադրական դատավճռի գույքի բռնագանձման վարույթում անձը, ում վերաբերյալ ստացվել է գաղտնիք	Չի ընդունվել: Գտնում ենք, որ Նախագծով նախատեսված ուսումնասիրության գաղտնիությունը և դրա տևողությունը պետք է դիտարկել ոչ թե քրեական, այլ քաղաքացիական գործիքակազմերի համատեքստում, քանի որ ուսումնասիրությունը ըստ էության հայցի նախապատրաստման գործընթաց է: Այսպիսով, Նախագծով փորձ է արվել հնարավորինս ապահովելու, որ պետությունը որպես հայցվոր հնարավորություն ունենա խախտման մասին իմանալու պահից առավելագույնը երեք տարում	Չի ընդունվել:

			հանդիսացող տեղեկությունը, կարող է դատարանի այդ որոշումը բողոքարկել միայն դատաքննության փուլում: Ստացվում է մի իրադրություն, երբ ստորադաս դատարանը քննում է գործը, իսկ վերադասը՝ գնահատում ապացույցի թույլատրելիությունը: Այսպիսի դեպքերն անընդունելի են, քանի որ ապացույցների հետազոտումը պետք է իրականացվի գործը քննող դատարանի կողմից անմիջականորեն: Մյուս կողմից, եթե անձը զրկվի գաղտնիք պարունակող տեղեկությունն ստանալու որոշումը բողոքարկելու հնարավորությունից, կխաթարվի մասնավոր կյանքի գաղտնիությունը, և դրա դեմ պայքարում անձը գործիքակազմ չի ունենա, ինչը կհանգեցնի նաև անձի արդար դատաքննության իրավունքի ոտնահարման: Եվ ի վերջո, անորոշ է նաև այն հարցի պատասխանը, թե ինչ հետևանք է ունենալու վերադաս ատյանի կողմից գաղտնիք ստանալը թույլատրող որոշումը ոչ իրավաչափ ճանաչելը, եթե ստորադաս ատյանն արդեն գույքի բռնագանձումը թույլատրած լինի, իսկ գույքը՝ իրացված: Ըստ այդմ, առաջարկում ենք այս մասով օրենքի կիրարկման փուլում կոլիզիաներից խուսափելու նպատակով	նախապատրաստելու հայց՝ առանց պատասխանողին դրա մասին հայտնելու: Միևնույն ժամանակ, Նախագծով նախատեսված է մինչև հայցի ներկայացումը շահագրգիռ անձանց կողմից գործի նյութերին ծանոթանալու և փաստաթղթեր ներկայացնելու հնարավորություն: Սույն ընթացակարգի համար հնավորություն ստեղծելը կարևոր է, քանի որ այն թույլ է տալիս իրավասու մարմին բացառել հայցի ներկայացումը, եթե գույքի ձեռքբերումը հիմնավորվում է անձի մոտ պահվող նյութերով և փաստաթղթերով:	

			լրացուցիչ քննարկել և վերախմբագրելՆախագծի 9-րդ հոդվածի բովանդակությունը:		
9.	«Լուսավոր Հայաստան» կուսակցություն	Նախագծի 10-րդ հոդվածի 4-րդ մաս:	Նախագծի 10-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է, որ արդարացման դատավճռի կայացումը կամ արդարացնող հիմքով գործի վարույթը կարճելը կամ քրեական հետապնդումը դադարեցնելը հիմք չէ զուգահեռ ընթացող ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթի դադարեցման համար: Եթե ուշադրություն դարձնենք ուսումնասիրությունն սկսելու հիմքերին, ապա կնկատենք, որ դրանք քրեական գործի վարույթի կարճման կամ քրեական հետապնդման դադարեցման միայն ոչ արդարացնող հիմքերն են: Ստացվում է, որ եթե քրեական վարույթն արդարացնող հիմքով ավարտվել է մինչև գույքի բռնագանձման վարույթն սկսվելը, ապա դա արգելք է ուսումնասիրություն սկսելու համար, իսկ եթե նույն փաստական հանգամանքներով քրեական և գույքի բռնագանձման վարույթներն ընթացել են զուգահեռ, ապա անձի արդարացումը չի զրկում իրավասու մարմնին անձին ապացուցողական ավելի ցածր շեմով սեփականությունից զրկելու հնարավորությունից:	Չի ընդունվել Նախագծի 5-րդ հոդվածում ամրագրված հիմքերը հանդիսանում են ազդակներ, որոնց հիման վրա կարող է սկսվել ուսումնասիրությունը: Ապօրինի ծագում ունեցող գույքի առկայության ռիսկի մասին ազդակ լինելուց զատ, քրեական գործի ընթացքը և ելքը պայմանավորված չեն կարող լինել բռնագանձման վարույթի ելքով և հակառակը:	Չի ընդունվել:

			Անհրաժեշտ է նշել, որ քրեական գործով վարույթում անձի արդարացումը հնարավոր է մի քանի հիմքերով. եթե անձն արդարացվել է ապացույցների բացակայության հիմքով, ապա այդ դեպքում ինչ-որ տեղ արդարացի կարելի է համարել գույքի բռնագանձման վարույթի շարունակումը, սակայն նույնը չի կարելի ասել հանցադեպի կամ հանցակազմի բացակայության հիմքով անձի արդարացման դեպքերի մասին: Ստացվում է, որ քրեական վարույթում արդարացված անձի վրա դրվում է քաղաքացիական վարույթում իր՝ արդեն իսկ նույն փաստակազմով հաստատված անմեղությունն ապացուցելու անհամաչափ պարտավորություն: Առաջարկում ենք բացառել նման իրավիճակները, ինչի համար պետք է նախատեսել, որ քրեական գործով արդարացված անձը գույքի բռնագանձման վարույթում չպետք է այլևս ունենա իր անմեղությունն ապացուցելու պարտականություն:		
10.	«Լուսավոր Հայաստան» կուսակցություն	Նախագծի 11-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետ:	Նախագծի 11-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետն իրավասու մարմնին հնարավորություն է տալիս որոշակի փաստերի հաստատման կամ հերքման անհրաժեշտություն առաջանալու դեպքում համապատասխան մարմնին	Չի ընդունվել: Նախագծի նշված հոդվածը հստակ նախատեսում է այն նպատակները, որոնց	Չի ընդունվել:

			հանձնարարելու իրականացնել օպերատիվ-հետախուզական միջոցառումներ: Սա առնվազն անթույլատրելի է, քանի որ քաղաքացիական վարույթում օպերատիվ-հետախուզական միջոցառումների ինստիտուտի ներդրումը խախտում է կողմերի իրավահավասարության սկզբունքը: Քաղաքացիական վարույթում երաշխավորված պետք է լինեն մրցակցության ու իրավահավասարության սկզբունքները, ուստի առաջարկում ենք իրավասու մարմնին որևէ դեպքում չօժտել գույքի բռնագանձման վարույթի ընթացքում օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու հանձնարարություն տալու լիազորությամբ:	հասնելու համար իրավասու մարմինը կարող է տալ օպերատիվ հետախուզական միջոցառում իրականացնելու հանձնարարությունը, դրանք կարող են լինել երեքը՝ իրական շահառուների և(կամ) փոխկապակցված անձանց շրջանակը և(կամ) գույքի ծավալը պարզելը: Միևնույն ժամանակ, նշված միջոցառումները նախատեսված են իրավիճակի մասին պատկեր ստանալու համար, իսկ այդպիսի միջոցառումների հիման վրա ստացված փաստաթղթերը քաղաքացիական դատարավարությանը շրջանակներում ունենալու են նույն կարգավիճակը,	

				ինչ ցանկացած այլ դեպքում քրեական գործի վարույթից փոխանցված լինելու դեպքում:	
11.	«Լուսավոր Հայաստան» կուսակցություն	Նախագծի 14-րդ հոդվածի 2-րդ մաս, 12-րդ հոդվածի 3-րդ մաս:	Նախագծի 14-րդ հոդվածի 2-րդ մասի սահմանմամբ՝ հայցի նախնական ապահովման միջոցներ կիրառելու վերաբերյալ դիմումը ներկայացվում է Երեւան քաղաքի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան: Այս կարգավորումը որևէ կերպ չի հիմնավորվում՝ հաշվի առնելով իրավակիրառ պրակտիկայում կանխատեսվող այն դժվարությունները, որոնք միանշանակ առաջանալու են միայն մայրաքաղաքում խնդրո առարկա վարույթների քննությամբ: Ընդհանրապես պարզ չէ նման սահմանափակման առաջադրումը: Նույնական խնդիրն առկա է նաև 12-րդ հոդվածի 3-րդ մասում Առաջարկում ենք նշյալ մասերը հանել կամ խմբագրել:	Չի ընդունվել: Ընդդատության հատուկ կանոնը սահմանվել է՝ առնվազն օրենքի գործողության սկզբնական շրջանում Բարձրագույն դատական խորհրդի կողմից սահմանված ցանկով վերապատրաստում անցած և մասնագիտացված դատավորների միջև գործերը բաշխելու նպատակահարմարությունից ելնելով:	Չի ընդունվել:
12.	«Լուսավոր Հայաստան» կուսակցություն	Նախագծի 14-րդ հոդվածի 7-րդ(արդեն 6-րդ) մաս:	Նախագծի 14-րդ հոդվածի 7-րդ մասը սահմանում է, որ եթե դատարանը թույլ է տալիս գույքի նկատմամբ ապահովման միջոցի կիրառումը, ապա դատախազն ունի որոշումն ստանալու պահից սկսած 6 ամիս ժամանակ՝ հայց ներկայացնելու համար: Սահմանված ժամանակահատվածը բավականին	Չի ընդունվել: Հարկ ենք համարում շեշտել, որ համապատասխան ժամկետը նախատեսված է շահագրգիռ անձանց կողմից գործի նյութերին	Չի ընդունվել:

			երկար է՝ հաշվի առնելով, որ անձը հնարավոր է զրկվի իր գույքը տիրապետելու, տնօրինելու և/կամ օգտագործելու հնարավորությունից այն պայմաններում, երբ դեռ հայց ներկայացված չէ: Օրինակ՝ ԱՄՆ-ում նման դեպքերում դատախազությունը հայց ներկայացնելու համար ունի ընդամենը 90 օր ժամանակ:[1] Սահմանված ժամկետից թեկուզ 1 օր ուշացումը հանգեցնում է նրան, որ հայց այլևս չի կարող ներկայացվել, իսկ վարույթը համարվում է դադարեցված՝ առանց վերսկսելու հնարավորության:	ծանոթանալու և փաստաթղթեր ներկայացնելու համար: Սույն ընթացակարգի համար հնավորություն ստեղծելը կարևոր է, քանի որ այն թույլ է տալիս իրավասու մարմին բացառել հայցի ներկայացումը, եթե գույքի ձեռքբերումը հիմնավորվում է անձի մոտ պահվող նյութերով և փաստաթղթերով:	
13.	«Լուսավոր Հայաստան» կուսակցություն	Նախագծի 20-րդ հոդված, 22-րդ հոդվածի 1-ին մաս:	Միմյանց նկատմամբ տրամաբանական հակասություն ունեն Նախագծի 16-րդ հոդվածի 5-րդ մասը և 20-րդ հոդվածները, ինչպես նաև 22-րդ հոդվածի 1-ին մասը: 16-րդ հոդվածը սահմանում է, որ անձի կողմից հայտարարագիր կամ դիրքորոշում ներկայացնելուց հրաժարվելը չի կարող մեկնաբանվել և օգտագործվել անձի կամ նրա ընտանիքի անդամների դեմ, իսկ 20-րդ հոդվածը, ապացուցման բեռի բաշխման կանոնները նախատեսելիս, նշում է, որ գործում է գույքի ապօրինի	Չի ընդունվել: Թյուր է առաջարկում նշված այն փաստարկը, որ գույքի ապօրինի ծագման կանխավարկածը հերքելու, այլ կերպ ասած՝ ծագման օրինականությունը ապացուցելու միակ տարբերակը հայտարարագիրը ներկայացնելն է,	Չի ընդունվել:

[1] https://www.justice.gov/sites/default/files/usao/legacy/2007/12/21/usab5506.pdf, էջ 18

			ծագում ունենալու կանխավարկածը: Ենթադրվում է, որ գույքի ապօրինի ծագում ունենալու կանխավարկածը հերքելու միակ ուղին շատ դեպքերում հայտարարագիր ներկայացնելն է, որը չանելու դեպքում գույքը բռնագանձվում է, հետևաբար հայտարարագիր չներկայացնելը կարող է օգտագործվել անձի դեմ: Ըստ այդմ այստեղ առաջարկում ենք 20-րդ և 22-րդ հոդվածները խմբագրել 16-րդ հոդվածի 5-րդ մասին համապատասխան:	հետևաբար հայտարարագիր չներկայացնելը փաստացի առաջացնելու է անբարենպաստ հետևանքներ: Անձը կարող է չներկայացնել հայտարարագիրը, բայց դատաքննության փուլում կարող է ներկայացնել հիմնավոր ապացույցներ իր գույքի ձեռքբերման օրինականության վերաբերյալ:	
14.	«Լուսավոր Հայաստան» կուսակցություն	Նախագծի 22-րդ 5-րդ մաս:	Առաջարկում ենք 22-րդ հոդվածի 5-րդ մասով առաջարկվող 25 մլն դրամի շեմը բարձրացնել առնվազն 50 մլն դրամի. անընդունելի է նման ցածր շեմի նախատեսումը ինչպես պետական ռեսուրսների (դատախազություն, դատարան և այլն) և ժամանակի վատնման, այնպես էլ քննարկվող օրենքի իրական հասցեատերերին թիրախավորելու տեսանկյունից: Միջազգային պրակտիկայում ևս նմանատիպ օրենքներով բավականին բարձր շեմ է նախատեսվում: Միաժամանակ առաջարկում ենք նվազագույն շեմը գերազանցող գույքի	Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:

			առկայությունը համարել վարույթ սկսելու միակ հիմքը, ինչն օրենքի կիրառության ավելի օբյեկտիվ չափանիշ է, քան Նախագծով առաջարկվող հիմքերը:		
15.	«Լուսավոր Հայաստան» կուսակցություն	Նախագծի 23-րդ հոդված:	Նախագծի 23-րդ հոդվածը սահմանում է, որ երրորդ անձի կողմից ձեռքբերված գույքը ենթակա չէ բռնագանձման, եթե վերջինս ապացուցում է, որ գույքը ձեռքբերելիս չգիտեր և չէր կարող իմանալ գույքի՝ ապօրինի ծագում ունենալու մասին: Քաղաքացիական դատավարության մեջ ընդունված կանոն է, որ անձը չի կարող կրել բացասական փաստերի ապացուցման պարտականությունը: Դժվար է պատկերացնել, թե ինչպես է հնարավոր ապացուցել ինչ-որ փաստի գոյության մասին չիմանալը, կամ առավել ևս, իմանալ չկարողանալը: Կարծում ենք՝ ավելի տրամաբանական կլիներ, նման իրավիճակներում դատախազի վրա դնել ապացուցման պարտականությունը: Այլ կերպ ասած՝ դատախազն ապացուցի անձի՝ գույքի ապօրինի լինելու մասին իմանալու հանգամանքը: Նույն հոդվածի 2-րդ մասն այն անձի համար, ով ստացել է ալիմենտ, կյանքին կամ առողջությանը պատճառված վնասի հատուցում կամ բարեգործություն, սահմանում է անհամաչափ պարտավորություն՝	Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:

			ապացուցելու, որ չգիտեր և ողջամտորեն չէր կարող իմանալ գույքի՝ ապօրինի ծագում ունենալու մասին: Քիչ է հավանական այնպիսի մի իրավիճակ, երբ ալիմենտ կամ վնասի հատուցում ստացող անձը ճշտի, թե ինչ միջոցներից է կատարվում վճարումը: Դեռ ավելին, նման պարտականություն ներպետական օրենսդրությամբ վերջիններիս համար սահմանված չէ, և հետևաբար արդարացի չէ ապացուցման որևէ բեռ դնելը նրանց վրա: Ուստիև առաջարկում ենք Նախագծից հանել մեկնաբանված դրույթները կամ այլ կերպ շարադրել դրանք՝ բացառելով փաստի բացակայությունն ապացուցելու տրամաբանությունը:		
16.	«Լուսավոր Հայաստան» կուսակցություն	Նախագծի 24-րդ հոդված	Նախագծի 24-րդ հոդվածը սահմանում է, որ գույքը բռնագանձվում է հօգուտ Հայաստանի Հանրապետության: Ըստ Նախագծի տրամաբանության՝ ստացվում է, որ եթե անձը հանցագործության պատճառով վնաս է կրել, պետությունը քաղաքացիական կարգով բռնագանձված գույքը չի ուղղում այդ անձի կրած վնասների հատուցմանը: Ավելին, նախատեսված չէ որևէ կառուցակարգ, որով տուժողը հնարավորություն կունենա հետ ստանալու իրեն պատկանող գույքը: Ըստ	Չի ընդունվել: ՀՀ քաղաքացիական օրենսգրքով նախատեսված վնասի հատուցման կանոնները (Գլուխ 60) հնարավորություն են տալիս անձին, ում անձին կամ գույքին վնաս է պատճառվել հակահիրավական	Չի ընդունվել:

			այդմ՝ առաջանում է այն ենթադրությունը, որ պետությունն ամենևին էլ չի ստանձնում սոցիալական արդարությունը վերականգնելու և հանցագործությունից տուժած անձանց իրավունքները վերականգնելու պարտականություն: Ուստի առաջարկում ենք նախատեսել այնպիսի դրույթներ, որոնք հնարավորություն կտան հանցագործությունից տուժած անձին հետ ստանալու առանց մեղադրական դատավճռի հօգուտ պետության բռնագանձված իրեն պատկանող գույքը:	գործողության արդյունքում դիմելու՝ իրեն պատճառված վնասը հատուցելու պահանջով, հետևաբար համապատասխան հայցի առկայության դեպքում գույքը կարող է բռնագանձվել հօգուտ անձի, ում պատճառվել է վնաս: Միևնույն ժամանակ, այդպիսի պահանջի բացակայության պայմաններում ապօրինի ծագում ունեցող գույքը ենթակա է բռնագանձման հօգուտ պետության:	
17.	«Լուսավոր Հայաստան» կուսակցություն	Նախագիծ:	Խնդրահարույց է թվում Նախագծով սահմանված ապացուցողական շեմը: Բանն այն է, որ Նախագծի հիմքում դրված տրամաբանության համաձայն՝ փաստը համարվում է հաստատված կամ հերքված, եթե դրա առկայությունը կամ բացակայությունն ավելի հավանական է: Այս կարգավորումն ուղղակիորեն հակասում է օրինական ենթադրության հիման վրա փաստ հաստատելու իրավական տրամաբանությանը: Գույքի	Չի ընդունվել: Նախագծում չկան կարգավորումներ ապացուցման շեմի վերաբերյալ՝ մասնավորապես՝ Նախագծում բացակայում է առաջարկում վկայակոչված այնպիսի	Չի ընդունվել:

			ապօրինի լինելու կանխավարկածը երբևիցե չի կարող համարվել օրինական ենթադրություն: Ուստի առաջարկում ենք փոփոխել շեմի իրավական բովանդակությունը:	կարգավորում, որը նախատեսում է, որ փաստը համարվում է հաստատված կամ հերքված, եթե դրա առկայությունը կամ բացակայությունն ավելի հավանական է: Նման կարգավորում առաջարկված էր հանրային քննարկման ներկայացված տարբերակում, սակայն այն մինչև Նախագիծը Կառավարության հաստատմանը ներկայացնելը հանվել է դրանից:	
18.	«Լուսավոր Հայաստան» կուսակցություն	Նախագիծ:	«Սահմանադրության 73-րդ հոդվածի տեսանկյունից խիստ խնդրահարույց է Նախագծի գործողությունը մինչ դրա ընդունումը գոյություն ունեցած իրավահարաբերությունների վրա տարածելը, քանի որ սահմանադրական այդ նորմն ուղղակիորեն արգելում է անձի իրավական վիճակը վատթարացնող օրենքներին և այլ իրավական ակտերին հետադարձ ուժ տալը: Նախագծում տեղ գտած մի շարք	Չի ընդունվել: Անդրադառնալով անձի իրավական վիճակը վատթարացնող օրենքների և այլ իրավական ակտերի հետադարձ ուժի արգելքի սահմանադրաիրավական հարցին՝ ՀՀ	Չի ընդունվել:

			դրույքներ միանշանակ կարելի համարել անձի իրավական վիճակը վատթարացնող հանգամանքներ: Ուստի Սահմանադրության հետ հակասություններ չառաջացնելու համար առաջարկում ենք վերանայել Նախագծի գործողության վերաբերյալ դրույթները՝ հետ գնալով առավելագույնը մինչ այն պահը, երբ Հայաստանի Հանրապետությունում պաշտոնատար անձանց համար սահմանվել է գույքի և եկամուտների հայտարարագիր ներկայացնելու պարտականություն:	Սահմանադրական դատարանն իր մի շարք որոշումներում հաստատել է, որ համապատասխան սկզբունքը, ի թիվս այլնի, իրավական անվտանգության սկզբունքի հետ մեկտեղ կոչված է ապահովելու հարգանքը լեգիտիմ ակնկալիքների հանդեպ: ՀՀ Սահմանադրական դատարանի այս դիրքորոշման լույսի ներքո, սահմանադրական սկզբունքը չի կարող մեկնաբանվել այնպես, որ պաշտպանի իրավունք, որը չի ծագել անձի մոտ մինչև օրենքի ուժի մեջ մտնելը (սեփականության իրավունք)՝ հիմք ընդունել գույքի՝ ապօրինի ծագում ունենալը:	
19.	«Լուսավոր Հայաստան» կուսակցություն	Նախագիծ:	Որքան էլ Նախագծով առաջարկվող վարույթը ներկայացվի քաղաքացիական դատավարության շրջանակներում, այն միևնույն է պարունակում է հանրային	Չի ընդունվել: Ցանկանում ենք ընդգծել, որ Նախագիծը ներդնում է	Չի ընդունվել:

			իշխանական տարրեր՝ այդպիսով առաջացնելով վարույթի մյուս կողմի իրավունքների պաշտպանության արդյունավետ երաշխիքների սահմանման անհրաժեշտություն: Փաստ է, որ քաղաքացիական դատավարությունը հիմնված է կողմերի լիարժեք մրցակցության սկզբունքի վրա, ինչը չի կարելի ասել Նախագծով նախատեսվող վարույթի վերաբերյալ: Նախագիծն ընդհանրապես անտեսում է անմեղության կանխավարկածի սահմանադրական իրավունքը՝ որպես հիմնավորում նշելով, որ անմեղության կանխավարկածի սկզբունքը կիրառելի չէ ոչ քրեական վարույթների նկատմամբ: Սակայն հաշվի առնելով վերոգրյալ բոլոր առաջարկները՝ կարող ենք փաստել, որ Նախագիծն այնուամենայնիվ պարունակում է քրեական վարույթի տարրեր: Ուստի առաջարկում ենք վերանայել մոտեցումն անմեղության կանխավարկածի սահմանադրական երաշխիքի մասով:	չհիմնավորվող հարստացման բռնագանձման ինստիտուտը, ինչին հղում կատարելով՝ Եվրոպայի Խորհրդի Խորհրդարանական վեհաժողովի թիվ 2218 բանաձևում նշվում է, որ այն, այլ մոդելների հետ միասին, համատեղելի է ճանաչվել մարդու իրավունքների, այդ թվում՝ անմեղության կանխավարկածի և սեփականության իրավունքի պաշտպանության հետ: Հարկ է նշել նաև, որ ՄԻԵԴ-ը *Phillips v. TheUnitedKingdom* գործով չի համարել մեխանիզմը «մեղադրանքի առաջադրում», իսկ կոնվենցիայի 6-րդ հոդվածի 2-րդ մասը (անմեղության	

				կանխավարկած) կիրառելի, այն դեպքերում, երբ բռնագանձման վարույթի նպատակը չի եղել անձի դատապարտումը կամ արդարացումը, նույնիսկ եթե դատարանը բռնագանձվող գույքի չափը որոշելու համար հիմք է ընդունել կանխավարկածը, որը անձը նախկինում եկամուտներ է ստացել հանցավոր գործունեության կատարման արդյունքում:	
20.	«Լուսավոր Հայաստան» կուսակցություն	Նախագիծ:	Նախագիծն առաջարկում ենք լրացնել հետևյալ հոդվածներով. «Ապօրինի ծագում ունեցող գույքի կամավոր հայտարարագրումը Մինչև սույն օրենքով սահմանված կարգով ուսումնասիրություն սկսելն անձն իրավունք ունի կամավոր հայտարարագրել իրեն պատկանող ապօրինի ծագում ունեցող գույքը: Այդ փաստի ուժով արգելվում է տվյալ գույքի նկատմամբ սույն օրենքով գույքի բռնագանձմանն ուղղված որևէ	Չի ընդունվել: Հաշտության համաձայնությամբ վարույթն ավարտելու հնարավորության առնչությամբ որդեգրված քաղաքականությունն արտահայտված է Նախագծի 21-րդ հոդվածով: Այն թույլ է	Չի ընդունվել:

			գործողություն իրականացնելը: Ապօրինի գույքի կամավոր հայտարարագրման գործընթացը համարվում է ավարտված, եթե Հայաստանի Հանրապետության պետական բյուջե է փոխանցվում գույքի շուկայական արժեքի՝ ա) անշարժ գույքի համար՝ 36 տոկոսի չափով գումար. բ) այլ տեսակի գույքի համար՝ 10 տոկոսի չափով գումար:»: Տոկոսների տարբերությունը պայմանավորված է համապատասխան ռիսկի հաշվարկով՝ անշարժ գույքի դեպքում գույքի հայտնաբերումն ավելի դյուրին է, մինչդեռ այլ գույքի դեպքում առկա են խնդիրներ, օրինակ՝ կանխիկ դրամական միջոցների հայտնաբերման մասով, ինչպես նաև բաժնամասերի/բաժնետոմսերի/փայերի դեպքում դրանց իրական արժեքը սահմանելու հետ կապված:	տալիս պոտենցիալ հայցվորին մինչև հաշտության գործընթացները սկսելը ունենալ գույքի ծավալների և դրա ձեռքբերման աղբյուրների վերաբերյալ բավարար պատկերացում, ինչը կարևոր է հաշտությամբ վարույթն ավարտելու հնարավորությունը ճիշտ գնահատելու համար:	
21.	«Լուսավոր Հայաստան» կուսակցություն	Հոդված՝ անցումային դրույթներ:	Նախագծի անցումային դրույթներն առաջարկում ենք լրացնել հետևյալ հոդվածով. «Կառավարությունը մեկ ամսվա ընթացքում ընդունում է իրավական ակտեր, որոնցով կարգավորվում է ապօրինի գույքի կամավոր հայտարարագրման գործընթացը:»:	Չի ընդունվել: Առաջարկը չի ընդունվել նախորդ առաջարկի չընդունման համատեքստում, քանի որ առաջարկվող փոփոխությունն	Չի ընդունվել:

				ուղղակիորեն կապված է նախորդ առաջարկի հետ:	
22.	«Լուսավոր Հայաստան» կուսակցություն	Հոդված 35:	Միաժամանակ առաջարկում ենք անցումային դրույթներում նախատեսել, որ օրենքը գործում է սահմանափակ ժամանակահատվածով (օրինակ 5 տարի, 1 անգամ մինչև 2 տարով երկարաձգման հնարավորությամբ): Այսպես հնարավորինս կչեզոքացվի օրենքի բացասական ազդեցությունը ներդրումային միջավայրի վրա:	Չի ընդունվել: Նախագծի ընդունման նպատակը կոռուպցիոն բնույթ հանցագործությունների միջոցով ստացված անօրինական ակտիվները և դրա հետևանքով պետությանը պատճառված վնասը վերականգնելն է, ինչպես նաև հետագայում նման հանցագործությունները կանխելն է: Ապօրինի ճանապարհով ստացված ակտիվների բռնագանձման կիրառումը վերահաստատում է կարևորագույն սկզբունք՝ ոչ ոք չպետք է եկամուտներ ստանա հանցավոր ճանապարհով: Հետևաբար գտնում ենք,	Չի ընդունվել:

				որ օրենքի գործողությունը ժամկետով սահմանափակելը չի կարող արդարացված լինել:	
23.	«Լուսավոր Հայաստան» կուսակցություն	Նախագիծ:	Նախագծով «շահագրգիռ անձիք» եզրի օգտագործումը. ներպետական դատավարական իրավունքում կարող է հանգեցնել մեկնաբանության և կիրառության խնդիրների, քանի որ դատավարական օրենսդրությունը նախատեսում է *դատավարության մասնակիցների, գործին մասնակցող անձանց* և *կողմերի* կատեգորիաները, ինչպես նաև այս սուբյեկտների համար դատավարական իրավունքների որոշակի շրջանակ: Ըստ այդմ, առաջարկում ենք վերանայել «շահագրգիռ անձիք» բառակապակցության օգտագործումը Նախագծում:	Ընդունվել է: Նախագծով սահմանվում է «շահագրգիռ անձ» հասկացությունը, համաձայն, որի վերջինս այն անձն է ում իրավունքների վրա կարող է ազդել գույքի բռնագանձումը: Նախագծում իրականացվել են փոփոխություններ ապահովելու համար որ «շահագրգիռ անձ» հասկացությունն օգտագործվի միայն ուսումնասիրության իրականացման փուլի նպատակներով:	Ընդունվել է:
24. ›	«Լուսավոր Հայաստան» կուսակցություն	«Պետական պաշտոններ և պետական ծառայության	«Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության	Չի ընդունվել: Հարկ է նկատել, որ Պետական պաշտոններ և	Չի ընդունվել:

		պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքի նախագծի 1-ին հոդված:	օրենքում առաջարկվում է կատարել լրացումներ, ըստ որոնց՝ Գլխավոր դատախազությունում ավելանալու են գլխավոր դատախազի՝ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթը համակարգող տեղակալի (12,50 դրույքով), «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքով նախատեսված գործառույթներ իրականացնող վարչության պետի (10.00 դրույքով) և նույն վարչության դատախազների (9.00 դրույքով) հաստիքներ: Ստացվում է, որ Գլխավոր դատախազությունում գոյություն ունեցող 12 վարչություններին ավելանում է ևս մեկը: Գտնում ենք, որ դատախազների ավելացվող պաշտոնների դրույքաչափն անարդարացիորեն է ավել մյուս վարչությունների դատախազների աշխատավարձից: Դեռ ավելին, նպատակահարմար չենք համարում գլխավոր դատախազի տեղակալի հաստիքի ավելացումը՝ դարձյալ մնացած տեղակալներից ավելի բարձր աշխատավարձով: Ուստի առաջարկում ենք բացառել նման տարբերակված մոտեցումը տարբեր գործառույթներ իրականացնող դատախազների վարձատրության նկատմամբ: Մյուս կողմից, անհասկանալի է թվում այն հանգամանքը, թե ինչու չի	պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքի համաձայն վարձատրության տարբեր գործակից է սահմանված օրինակ Երևան քաղաքի դատախազի (9.00) և մարզի դատախազի(8.00) համար, այնինչ վերջիններս իրականցնում են բոլորովին նույն գործառույթները՝ տարբեր վայրերում: Հետևաբար, գտնում ենք, որ որոշ իրավիճակներում, այդ թվում այս, դրույքաչափերի տարբերակումը կարող է լիներ արդարացված: Այս պարագայում գտնում ենք, որ դրույքաչափի շեմի բարձրացումն արդարացված է առանձնահատուկ մասնագիտական	

			նախատեսվում ավելի բարձր վարձատրություն այն դատավորների համար, ովքեր քննելու են ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վերաբերյալ գործեր: Այդ գործերով զբաղվող դատախազների համար առավել բարձր վարձատրություն նախատեսելու տրամաբանությունն այն է, որ վարույթի քննարկվող տեսակի առկայությունը նոր է, անհրաժեշտ է առավել բարձր զգուշավորություն և պատասխանատվություն, ինչպես նաև ծանրաբեռնվածությունն է առավել: Սակայն եթե նոր ձևավորվող վարչության դատախազներն զբաղվելու են միայն ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վերաբերյալ գործերով, ապա դատավորներն այդ վարույթները քննելու են մյուս գործերի քննությանը զուգահեռ:	կարողություններով անձանց ներգրավելու անհրաժեշտությամբ: Ինչ վերաբերում է բռնագանձման հայցեր քննող դատավորների վարձատրությանը, ապա հարկ է նկատել, որ հակակոռուպցիոն դատարանների ստեղծումից հետո Նախագծով նախատեսված վարույթները պետք է քննվեն հակակոռուպցիոն դատարանների կողմից: Դատարանների ստեղծումից հետո կքննարկվի գույքի բռնագանձման հայցեր քննող դատավորների համար վարձատրության համեմատաբար բարձր գործակից նախատեսելու հարցը:	
25.	«Լուսավոր Հայաստան»	Նախագիծ և «Օպերատիվ-	«Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» Հայաստանի	Չի ընդունվել: Հարկ է նշել, որ	Չի ընդունվել:

	կուսակցություն	հետախուզական գործունեության» մասին ՀՀ օրենքի 6-րդ մաս:	Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 6-րդ հոդվածը նախատեսում է հետևյալը, որ յուրաքանչյուր անձ իր նկատմամբ քրեական գործի հարուցումը մերժվելուց կամ հարուցված քրեական գործի վարույթը կարճվելուց՝ հանցագործության դեպքի բացակայության կամ արարքի կատարման մեջ հանցակազմի բացակայության պատճառով, կամ պատճառված վնասը քրեական օրենքով օրինաչափ համարվելուց կամ իր նկատմամբ արդարացման դատավճիռ կայացվելուց կամ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթն ավարտվելուց հետո՝ եռամսյա ժամկետում, իրավունք ունի օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմիններից պահանջելու իր նկատմամբ իրականացված օպերատիվ-հետախուզական միջոցառումների հետևանքով ստացված նյութերը և փաստաթղթերը: Հարց է ծագում, թե ինչպես կարող է անձը պահանջել քրեական և քաղաքացիական զուգահեռ ընթացող վարույթներից մեկի ավարտի դեպքում նշված նյութերը, երբ մյուս վարույթը դեռ ընթացքի մեջ է: Ավելին, հնարավոր են	Նախագծի 10-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ նախնական ապահովման միջոցների կիրառումից, իսկ կիրառման անհրաժեշտության բացակայության դեպքում ուսումնասիրության արդյունքների նախնական ամփոփումից անմիջապես հետո իրավասու մարմնի որոշմամբ հայց հարուցելու հիմքերի ուսումնասիրության ընթացքը կասեցվում է, եթե հայցի հիմքում դրվելու են նախնական քննության տվյալներ, որոնք չեն հրապարակվել քրեական վարույթն իրականացնող մարմնի կողմից: Սույն հոդվածի հիման վրա ուսումնասիրության ընթացքի կասեցման որոշում կայացնելու	

			դեպքեր, որ քաղաքացիական վարույթն ավարտվի, քանի դեռ քրեական գործը գտնվում է մինչդատական վարույթում, որը գաղտնի է: Հետևաբար այս կարգավորման պայմաններում հետախուզական գործունեություն իրականացնող մարմնի կողմից նյութերի և փաստաթղթերի տրամադրումը կարող է խախտել զուգահեռ վարույթի գաղտնիությունը: Կարծում ենք՝ նպատակահարմար կլիներ բացառություն սահմանել զուգահեռ ընթացող վարույթների համար: Նույն խնդիրն առկա է նաև նույն հոդվածի 4-րդ մասի կարգավորման մեջ, որում նշվում է, որ սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված նյութերը ենթակա են ոչնչացման անձինկատմամբ քրեական գործի հարուցումը մերժվելուց կամ հարուցված քրեական գործի վարույթը կարճվելուց կամ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթն ավարտվելուց՝ հանցագործության դեպքի բացակայության կամ արարքի կատարման մեջ հանցակազմի բացակայության պատճառով, կամ պատճառված վնասը քրեական օրենքով օրինաչափ համարվելուց կամ անձի նկատմամբ արդարացման դատավճիռ կայացվելուց հետո՝ եռամսյա ժամկետում: Ենթադրվում է, որ սա	դեպքում կասեցվում են ուսումնասիրության ընթացքի հետ կապված բոլոր ժամկետները: Նախնական քննության ավարտից հետո կասեցված ժամկետների ընթացքը շարունակվում է ժամկետի մնացած մասով: Հետևաբար մինչդատական վարույթի ընթացքում իրականացված օպերատիվ հետախուզական միջոցառումների արդյունքում ձեռքբերված տեղեկությունները «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» Օրենքի 6-րդ հոդվածի համաձայն ենթակա են տրամադրման կամ ոչնացման, եթե դրանք չեն օգտագործվում ապօրինի ծագում ունեցող	

			տեխնիկական բացթողում է, քանի որ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթը չի կարող ավարտվել հանցադեպի կամ հանցակազմի բացակայության հիմքով: Հաշվի առնելով նշվածը՝ առաջարկում ենք վերանայել քննարկվող օրենքում նախատեսվող լրացումները:	գույքի բռնագանձման վարույթի շրջանակում, իսկ օգտագործվելու դեպքում ենթակա են տրամադրման՝ վարույթն ավարտվելուց հետո: Վերոգրյալը հաշվի առնելով՝ գտնում ենք, որ զուգահեռ վարույթի գաղտնիության հարցը և օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքների տրամադրման հարցը լիարժեք կարգավորված է: Իսկ ուսումնասիրության նյութերի հասանելիության հարցը կարգավորված է Նախագծի 16-րդ հոդվածով:	
26.	«Լուսավոր Հայաստան» կուսակցություն	Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության	Քաղաքացիական դատավարության օրենսգրքում նախատեսվող փոփոխություններից ակնհայտ է դառնում, որ գաղտնի տեղեկությունների տրամադրման վարույթը քննվելու է հատուկ վարույթի կարգով: Սա խիստ վիճահարույց է այն առումով, որ հատուկ	Ընդունվել է մասնակի: Ստացված այլ առաջարկի հիման վրա ապացույցի ստացումը նախատեսվել է որպես մինչև հայցի հարուցումը ապացույցներ	Ընդունվել է մասնակի:

		օրենսգրքում լրացումներ կատարելու մասին Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 3-րդ հոդված:	են համարվում հիմնականում այն վարույթները, որոնցում չկան հակադարձ շահերով օժտված կողմեր: Պատահական չէ, որ հատուկ վարույթում վեճ առաջանալու դեպքում դատարանը չի շարունակում քննել գործը հատուկ վարույթում՝ հայցը թողնելով առանց քննության (Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 180-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետ): Օրենքով պահպանվող գաղտնի տեղեկությունների տրամադրման վարույթում առկա են հակադիր շահերով օժտված կողմեր: Այն, որ կողմերից մեկը չունի այդ վարույթին մասնակից դառնալու հնարավորություն, չի նշանակում, որ վարույթը տեղավորվում է օրենսգրքով սահմանված հատուկ վարույթների տրամաբանության մեջ: Ուստի առաջարկում ենք վերանայել այս կարգավորումները ևս:	պահանջելու դեպք և հեռացվել է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում համապատասխան լրացում կատարելու առաջարկը:	
27.	«Լուսավոր Հայաստան» կուսակցություն	«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի	Հայաստանի Հանրապետության քրեական օրեսգրքում կատարվող լրացումներով առաջարկվող հանցակազմերում դիտավորությունը, որպես սուբյեկտիվ կողմ, չի նշվում, ինչը չի բխում որպես լրացում առաջարկվող հանցատեսակների տրամաբանությունից: Առաջարկում ենք լրացնել:	Չի ընդունվել: Հարկ ենք համարում շեշտել, որ Քրեական օրենսգրքի 28-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անզգուշությամբ կատարված արարքը	Չի ընդունվել:

		նախագծի 1-ին և 2-րդ հոդվածներ:		հանցագործություն է, եթե դա հատկապես նախատեսված է սույն օրենսգրքի Հատուկ մասով: Հետևաբար, եթե Հատուկ մասի հոդվածում չկա նշում մեղքի ձևի մասին, հանցակազմում մեղքը դրսևորվում է միայն դիտավորությամբ:	
28.	«Բարգավաճ Հայաստան» կուսակցություն	Նախագծի 5-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետ:	Նախագծի 5-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետից հանել «բ» ենթակետը:	Չի ընդունվել: Հարկ է նշել, որ միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ քրեական հետապնդում իրականացնելու վաղեմության ժամկետները անցած լինելը այն առանցքային հիմքերից է, որոնց դեպքում կարևորվում է առանց մեղադրական դատական ակտի գույքի բռնագանձման մեխանիզմների	Չի ընդունվել:

				առկայությունը:	
29.	«Բարգավաճ Հայաստան» կուսակցություն	Նախագծի 5-րդ հոդված:	Նախագծի 5-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 4-րդ մասով. «Արգելվում է սկսել ուսումնասիրություն, եթե անցել են քրեական գործի հարուցման վաղեմության ժամկետները»:	Չի ընդունվել: Առաջարկը չի ընդունվել նախորդ առաջարկի չընդունման համատեքստում, քանի որ առաջարկվող փոփոխությունն ուղղակիորեն կապված է նախորդ առաջարկի հետ:	Չի ընդունվել:
30.	«Բարգավաճ Հայաստան» կուսակցություն	Նախագծի 7-րդ հոդվածի 2-րդ մաս:	Նախագծի 7-րդ հոդվածի 2-րդ մաս շարադրել հետևյալ բովանդակությամբ. «Հիմք ընդունելով ապօրինի ծագում ունեցող գույքի վերաբերյալ հայտնի հանգամանքները՝ իրավասու մարմինը որոշում է ուսումնասիրվող ժամանակահատվածը, որը կարող է ներառել բացառապես սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո ընկած ժամանակահատվածը»:	Չի ընդունվել: Օրենքի կիրառելիությունը դրա ընդունումից առաջ ձեռքբերված գույքի նկատմամբ բխում է ինստիտուտի էությունից և ուղղակիորեն նախատեսված է նաև այլ երկրների ոլորտային օրենքներով, այդ թվում՝ օրինակ՝ Իռլանդիայի, Բուլղարիայի և Միացյալ Թագավորության օրենսդրությամբ:	Չի ընդունվել:
31.	«Բարգավաճ Հայաստան» կուսակցություն	Նախագծի 20-րդ հոդվածի 1-ին	Նախագծի 20-րդ հոդվածի 1-ին մասից հանել «սույն օրենքով նախատեսված առանձնահատկությունների հաշվառմամբ	Չի ընդունվել: Դրույթի նման բովանդակությունը	Չի ընդունվել:

		մաս:	» բառերը:	կոչված է ընդգծելու վարույթի առանձնահատկությունը քաղաքացիադատավարական ընդհանուր կանոններից, հարկ է նկատել, որ նման ձևակերպումներ կարելի է հանդիպել նաև ներկայիս Քաղաքացիական դատավարության օրենսգրքի կարգավորումներում, մասնավորապես՝ 235-րդ հոդվածը, որը վերաբերում է հատուկ վարույթներին:	
32.	«Բարգավաճ Հայաստան» կուսակցություն	Նախագծի 20-րդ հոդվածի 2-րդ մաս:	Նախագծի 20-րդ հոդվածի 2-րդ մասից հանել « Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հարաբերություններում գործում է գույքի՝ ապօրինի ծագում ունենալու կանխավարկածը, քանի դեռ անձը, ում պատկանում է ապօրինի ծագում ունեցող գույքը, չի ապացուցել գույքի ձեռքբերման օրինականությունը:» նախադասությունը:	Չի ընդունվել: Գույքի ապօրինի ծագում ունենալու հերքելի կանխավարկածի օգտագործումը խրախուսվում է Սթար նախաձեռնության ուղեցույցով և արդեն օգտագործվում է այլ երկրների, այդ թվում՝	Չի ընդունվել:

				Սլովենիայի և Բուլղարիայի համարժեք օրենսդրական մեխանիզմներում:	
33.	«Բարգավաճ Հայաստան» կուսակցություն	Նախագծի 22-րդ հոդվածի 1-ին մաս:	Նախագծի 22-րդ հոդվածի 1-ին մաս շարադրել նոր խմբագրությամբ. «Դատարանը Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով կայացնում է վճիռ՝ հիմք ընդունելով հայցվորի և պատասխանողի կողմից ներկայացված ապացույցները»:	Չի ընդունվել: Գույքի ապօրինի ծագում ունենալու հերքելի կանխավարկածի օգտագործումը խրախուսվում է Սթար նախաձեռնության ուղեցույցով և արդեն օգտագործվում է այլ երկրների, այդ թվում՝ Սլովենիայի և Բուլղարիայի համարժեք օրենսդրական մեխանիզմներում:	
34.	«Բարգավաճ Հայաստան» կուսակցություն	Նախագծի 22-րդ հոդվածի 3-րդ մաս:	Նախագծի 22-րդ հոդվածից հանել 3-րդ մասը:	Չի ընդունվել: Գույքի ապօրինի ծագում ունենալու հերքելի կանխավարկածի օգտագործումը խրախուսվում է Սթար նախաձեռնության ուղեցույցով և արդեն	Չի ընդունվել:

				օգտագործվում է այլ երկրների, այդ թվում՝ Սլովենիայի և Բուլղարիայի համարժեք օրենսդրական մեխանիզմներում:	
35.	«Բարգավաճ Հայաստան» կուսակցություն	Նախագծի 22-րդ հոդված՝ 5-րդ մաս:	Նախագծի 22-րդ հոդվածի 5-րդ մասում «քսանհինգ» բառը փոխարինել «հիսուն» բառով:	Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
36.	Պատգամավոր Վլադիմիր Վարդանյան	Նախագծի 22-րդ հոդված՝ 5-րդ մաս:	Նախագծի 22-րդ հոդվածի 5-րդ մասում «քսանհինգ» բառը փոխարինել «հիսուն» բառով:	Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
37.	ՀՀ Կառավարություն	Նախագծերի փաթեթ:	Առաջարկվող փոփոխությունները՝ ըստ կից ներկայացվող տեղեկանքի:	Ընդունվել է:	Ընդունվել է: